ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-9-5-Ա

ք. Երևան 04.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում քննարկեց 2023 թվականի հունիսի 12-ին արտոնագրային հավատարմատար Լենա Միտիչյանի կողմից ներկայացված «Արեգի» ՍՊԸ ընկերության (ՀՀ, 0038 Երևան, Աբելյան 6/4, ԱՄ) «Armeniaca» (No20212847) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է ԱԾՄԴ-ի 29-րդ և 30-րդ դասերի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «Armeniac» («Մեհրաբյան Արմեն», Լոռի մարզ, գյուղ Օձուն, 1, 66/1 (ԱՄ), N-15226, 12.04.2010թ.) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 – Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 130-րդ և 132-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշանին նման են համարվում համակցված ապրանքային նշանները: Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝

այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանների բառային տարրերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է բառերի գրեթե նույնատիպ հնչողությամբ և, չնայած առանձին տարբերությունների, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված են տվյալ բառերը, ավելի վաղ գրանցված համակցված ապրանքային նշանի «Armeniac» բառային տարրը զուգորդվում է հայտարկված «Арменьяка» կյուրեղատառ նիշի հետ, որը հանդիսանում է հիմնական՝ «առաջնային ընկալման» տարր և տարբերությունը կայանում է բառավերջում՝ «a» տառի մեջ՝ «Арменьяк(a)», որն էական դեր չի կատարում ապրանքային նշանի ընկալման հարցում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է ԱԾՄԴ-ի 29-րդ և 30-րդ դասերի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «Armeniac» («Մեհրաբյան Արմեն», Լոռի մարզ, գյուղ Օձուն, 1, 66/1 (AM), N-15226, 12.04.2010թ.) համակցված ապրանքային նշանին: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանների բառային տարրերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է բառերի գրեթե նույնատիպ հնչողությամբ և, չնայած առանձին տարբերությունների, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված են տվյալ բառերը, ավելի վաղ գրանցված համակցված ապրանքային նշանի «Armeniac» բառային տարրը զուգորդվում է հայտարկված «Арменьяка» կյուրեղատառ նիշի հետ, որը հանդիսանում է հիմնական՝ «առաջնային ընկալման» տարր և տարբերությունը կայանում է բառավերջում՝ «a» տառի մեջ՝ «Арменьяк(a)», որն էական դեր չի կատարում ապրանքային նշանի ընկալման հարցում:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Լենա Միտիչյանի կողմից ներկայացված «Արեգի» ՍՊԸ ընկերության «Armeniaca» (No20212847) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ